

ERM0078



Ժ Ր Ա Գ Ի Ր

ՆԵՐԿԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

1889



# ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

### ԳԼՈՒԽ Ա.

ՊԻՄԱՐՄՈՒՆՔ ԵՒ ՄԱՍՆԱԽՈՐ ԿԱՆՈՆՔ  
ՆՈՅԻՆ

807. 1. — Ազգային Ընդհանուր Ժողովն իւր Սահմանադրական պաշտօնը կատարելու համար ( Տե՛ս Սահմանադրութիւն Յօդ. 60 ), երկու տեսակ գումարումներ կ'ունենայ, որոց մին Պարբերական եւ միւսն Պատահական ։

807. 2. — Պարբերականը տեղի կ'ունենայ երկու տարին մի անգամ, եւ երկամբայ նստաշրջան մը կը կազմէ Մայիս եւ Յուլիս ամսոց մէջ՝ բաղկացեալ այնքան նիստերէ որքան հարկաւոր լինին իւր Սահմանադրական Օրակարգն սպառելու ( Սահմանադրութիւն Յօդ. 61 ) ։

Սոյն Օրակարգ կը պարունակէ հետեւեալ խնդիրներն .

Ա. Համարառութիւն երկամբայ պաշտօնավարութեան Ազգային Վարչութեան .

Բ. Հաշուեքննութիւն Ելից եւ Մտից նոյն երկտարեկան շրջանի .

Գ. Ընտրութիւն նոր կրօնական եւ Բազաքական Ժողովոց .

Եւ , Դ. Կարգադրութիւն Ելեւմտից հետագայ երկտարեկան շրջանի ։

807. 3. — Պատահական գումարումներ տեղի կ'ունենան ամեն անգամ որ պատահ



հին Սահմանադրուպէս Ազգային Ժողովոյ Իրաւասութեանը պատկանող խնդիրներ, ինչպէս են՝ Մանակցութիւն Կաթողիկոսական ընտրութեան. ընտրութիւն Կ. Պօլսոյ եւ Ս. Երուսաղէմի Պատրիարքաց. Անհամաձայնութիւն ընդ մէջ Պատրիարքի եւ Վարչական Ժողովոյ կամ Ժողովոց ընդ միմեանս. Վերաքննութիւն Սահմանադրութեան, եւն.:

80Գ. 4. — Ազգային Ժողովն 'ի նիստ կը հրաւիրուի միշտ Սահմանադրութեան 61 եւ 62 եւ 89 յօդուածոց տրամադրութեանց համեմատ :

80Գ. 5. — Երկու տարին անգամ մը Մայիս ամսոյ սկիզբն Պատրիարքը կը բանայ Պարբերական նստաշրջանը պարտ ու պատշաճ բանիւք եւ Ժողովոյն կը ներկայէ. Ա. Երեսփոխանական նոր ընտրութեանց Տեղեկագրերն՝ հանդերձ յարակից պաշտօնագրովք. Բ. Վարչութեան անցեալ երկտարեկան պաշտօնավարութեան Համարատուութիւնն. Գ. նախորդ երկտարեկան շրջանի Ելեւմտից հաշիւներն եւ յաջորդ երկ տարեկան շրջանի թաղրական Ելմտացոյցը եւ Դ. Կրօնական Ժողովոյ նորոգ ընտրութեան համար Համագումար Ժողովոյ պատրաստած ընտրելաց ցուցակն, զորս կանխաւ պարտաւորեալ է պատրաստել իւր գործակից Ժողովներով :

80Գ. 6. — Բացումէ անմիջապէս յետոյ Պատրիարքն կը հրաւիրէ Երեսփոխաններէն երկցադուինից մին առժամեայ Ատենապետ բազմիւ եւ կրտսերագոյն մը առժամապէս Ատենադպրութիւն ընել :

Սոյն առժամեայ Դիւանի պաշտօնն է ըստ կանոնի ղեկավարել Ազգային Ժողովն՝ մինչեւ ց' վաւերացումն Երեսփոխանական նոր ընտրութեանց եւ ց' ընտրութիւն Դիւանի :

80Գ. 7. — Երեսփոխանական նոր ընտրութեանց մեծագոյն մասի վաւերացմանէ յետոյ անմիջապէս կը ձեռնարկուի Դիւանի

ընտրութեան որ կը բաղկանայ մէկ Ատենապետէ, մէկ Ատենադպրէ եւ մէկ մէկ Փոխնորդներէ, որք կ'ընտրուին մի առ մի՝ միանուն գաղտնի քուէով եւ ձայնից բացարձակ առաւելութեամբ :

80Գ. 8. — Ատենապետի պաշտօնն է ժողովն ըստ կանոնի ղեկավարել եւ վիճարանութիւններն յուղղութեան պահել :

80Գ. 9. — Ատենադպրի պաշտօնն է Ատենական գրութեանց խնամք տանիլ. ժողովոց թղթեանն կարգադրել եւ պահպանել եւ Ատենագրութեանց խմբագրութեան, տըպագրութեան եւ ցրուման կանոնաւորութեանն հսկել :

80Գ. 10. — Փոխնորդաց պաշտօնն է փոխանորդել՝ պաշտօնակալաց բացակայութեան ժամանակ անոնց գործը կատարել :

80Գ. 11. — Վարչութեան անցեալ երկտարեկան պաշտօնավարութեան համարատուութիւնն ապագրութեամբ կանխաւ Երեսփոխանաց հարորդուելէ յետոյ՝ երբ Համարառութեան խնդիրն կուգայ Օրակարգ՝ նախ երեսփոխանք կը հրաւիրուին տեղեկագրեալ խնդրոց եւ եղելութեանց վրայ իրենց գիտողութիւններն եւ ընդհանրապէս համարատու մարմնոյն պարտուց եւ իրաւանց կատարման նկատմամբ իրենց տեսութիւններն պարզել ժողովին. եւ ապա կը կոչուի նա՝ ի բացատրութիւն, եթէ խնդրուի կամ լսընդրէ տալ. եւ համարառութիւնը կը վերջանայ ժողովոյ գաղտնի քուէարկութեամբ որ մասնաւոր բանաձեւով մը կ'արտայայտէ ժողովոյ դատողութիւնը :

80Գ. 12. — Նախորդ եւ յաջորդ երկտարեկան շրջանաց Ելմտացոյցերուն խնդիրն Օրակարգ եկած ժամանակ՝ Ազգային ժողովն կը յղէ գառաջիւնն ի հաշուեքնութիւն Մասնաժողովոյ մը զոր իւր մէջէն կ'ընտրէ

Դիւանի առաջարկութեամբ, եւ զերկրորդն  
կը յանձնէ 'ի նախաքննութիւն նորընտիր  
Քաղաքական ժողովոյ որ պարտաւոր է առ  
առաւելն 15 օրուան մէջ բերել իւր Տեղե-  
կագիրն. եւ ժողովն երկու կողմանէ ընդու-  
նած տեղեկագրութեանց վրայ վիճաբանելով  
կուտայ զիւր վճիռ, միեւնոյն առթիւ սահ-  
մանելով նաեւ հետագայ երկու տարիներու  
համար Ազգային Տրոյ պատշաճ տնօրինու-  
թիւնը ( Սահմանադրութիւն Յօդ. 46, 49  
եւ 61 ) :

## ԳԼՈՒԽ Բ.

### ԱՅԾԵԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՔ

80Դ. 13. — Առանց նախադահի եւ Դի-  
ւանի Ատեան չ'կրնար կազմուիլ : Եթէ Պատ-  
րիարքը բանաւոր պատճառաւ ստիպեալ ըլ-  
լայ բացակայ գտնուիլ, նոյն նստին նախա-  
գահ ցոյց կուտայ նամակաւ ժողովական Ե-  
կեղեցականներէն մին. եւ եթէ չ'կարենայ  
ո՛չ գալ եւ ո՛չ գրել, Ատեանի բացման ո-  
րոշեալ ժամուն ներկայ գտնուող Եկեղեցա-  
կաններէն երիցադոյնն նոյն նստի կը նախա-  
գահէ : Եթէ Դիւանի անդամներէն մին կամ  
երկուքն միանգամայն բացակայ գտնուին,  
եւ Փոխանորդներն եւս ներկայ չ'ըլլան, նա-  
խադահին հրաւիրմամբ Երեսփոխանաց երի-  
ցագունից մին յառժամեայ Ատենապետու-  
թիւն եւ կրտսերագոյն մը յառժամեայ Ատե-  
նադպրութիւն կը կոչուին :

80Դ. 14. — Ատեանը կը բացուի ճիշդ  
որոշեալ ժամուն՝ եթէ ներկայ Երեսփոխա-  
նաց թիւն առ նուազն երեսուն եւ վեց է .  
եւ Ատենական գործողութիւնը կը կատար-  
ուին հետեւեալ կարգաւ :



## Ա. — Ատենական գործողութիւնք

80Գ. 15. — Նախ՝ Ատենադուրութիւնն որ կանխաւ տպագիր ցրուեալ է Երեսփոխանաց՝ վաւերացման կ'ենթարկուի հանդերձ դիտողութեամբք Երեսփոխանաց որ ներկայ գտնուած են նոյն Նստին եւ պատասխանեօք Ատենադպրին՝ եթէ տեղի ունենան :

80Գ. 16. — Ապա Ժողովին կ'հաղորդուին 'ի Դիւանէ ընթերցմամբ ըլլող այն գրութիւնք որ յանուն Ազգային Ժողովոյ առ իւր Պատրիարք-Նախագահն ուղղեալ եւ Անոր կողմէն յանձնեալ են Դիւանին :

Սոյն գրութիւնք են Կառավարական Հրամանագիրք, Վարչական պաշտօնագիրք, Նախաքննիչ Յանձնաժողովոց տեղեկագիրք, Երեսփոխանական հրաժարագիրք, ազդագիրք, առաջարկութիւն, հարցումն եւ ժողովրդական հանրագիրք :

80Գ. 17. — Կառավարական հրամանագիրք եւ Վարչական պաշտօնագիրք անմիջապէս կը զետեղուին ինչրոց կարգի կամ Օրակարգի մէջ, ըստ հանգամանաց խընդրոյն՝ զոր Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վիճարանութեան, եթէ նախապարաստական գործողութեանց կարօտութիւն չունին, իսկ հակառակ պարագայի մէջ կը յանձնուին Մասնաժողովոյ մը զոր Ժողովը կ'ընտրէ Դիւանի առաջարկութեամբ, եւ կ'սպասէ անոր Տեղեկագրոյն խնդրոյն ելք տալու համար :

80Գ. 18. — Նախաքննիչ Յանձնաժողովոց Տեղեկագիրք միեւնոյն եղանակաւ կը զետեղուին ինչրոց կարգի կամ Օրակարգի մէջ :

80Գ. 19. — Երեսփոխանական Հրաժարագիրք՝ եթէ պարզ են՝ կ'ընդունուին քուէարկութեամբ Ժողովոյ առանց վիճարանութեան, նոյնպէս ազդագիրք պարզապէս կը

նշանակուին Ատենագրութեան մէջ առանց  
որ եւ է վիճարանութեան :

80Դ. 20. — Իսկ պատճառարանեալ հը-  
րաժարականք եւ բոլոր առաջարկութիւնք  
կը յղուին 'ի նախաքննութիւն Յանձնաժո-  
ղովոյ զորս ժողովն Դիւանի առաջարկու-  
թեամբ կ'ընտրէ քուէով առանց վիճարանու-  
թեան :

80Դ. 21. — Հարցմունք որ կ'ուղղուին  
Ազգային Վարչութեան 'ի դիմաց Երեսիո-  
խանաց անհատաբար կամ հաւաքաբար, Ազ-  
գային ժողովոյ Ատեանն ելնելու համար  
պայման է՝ որ Գրաւոր, պատշաճից օրինաց  
համաձայն խմբագրեալ, բուսկիր եւ առ  
Պատրիարք նախագահն ուղղեալ, առ նուազն  
ժողովոյ բացումէն 2 ժամ յառաջ յանձնեալ  
եւ ստորագրեալ Հեղինակէն միայն՝ եթէ տե-  
ղեկութիւն խնդրելու յատկացեալ են. կամ  
առ նուազն տասն Երեսիոխաններէ՝ եթէ  
հարցման առարկայ եղող խնդիրն ամբաս-  
տանութեան կը ձգտի. եթէ հարցագիրք  
զուրկ գտնուին սոյն պայմաններէ, զորս նա-  
խագահը կ'ստուգէ Դիւանի հետ խորհրդ-  
գակցութեամբ, հեղինակին կ'վերադարձուին  
առանց ժողովոյ հաղորդուելու :

80Դ. 22. — Պարզ հարցմունք կը յըլ-  
ուին անմիջապէս առ պատասխանատու մար-  
մինն որ գէ'թ յաջորդ նստին պարտաւոր է  
բերել պատասխանն՝ գրաւոր, կամ բացատ-  
րել այն պատճառներն որ պատասխանն յե-  
տաձգել կը հարկադրեն որոշեալ ժամանա-  
կի մը համար : Այս պարագայի մէջ եթէ  
ժողովը գոհ մնայ տրուած պատասխանէն  
կամ բացատրութեանէն՝ զոր կը յայտնէ քը-  
ւէարկութեամբ առանց վիճարանութեան,  
հարցման միջադէպը կը փակուի. իսկ եթէ  
ոչ՝ հարցումն 'ի քննութիւն կը դրկուի հան-  
գեբրձ պատասխանով մի մասնաւոր Յանձ-  
նաժողովոյ զոր ժողովը կ'ընտրէ Դիւանի ա-  
ռաջարկութեամբ :

80Կ. 23. — Իսկ ամբաստանական ճշգրտում ունեցող հարցմունք կը յղուին 'ի քրննութիւն Յանձնաժողովոյ մը զոր ժողովն գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրէ Հեղինակներէն դուրս 7 Երեսփոխաններէ եւ կ'ըսպասէ անոր Տեղեկագրոյն՝ խնդրոյն վրայ վիճաբանութեամբ իւր դատողութիւնն արտայայտելու համար :

80Կ. 24. — Ժողովրդական հանրադրութեամբ ո՛ր եւ է խնդրագիր կամ բողոքագիր՝ ինչ կերպով որ ալ խմբագրեալ ըլլայ՝ չ'կրնար ուղղակի ընդունուիլ յատեան ժողովոյ . բայց եթէ երեք Երեսփոխանք կամենան հաւաքաբար ստանձնել անոր պատասխանատուութիւնը , եթէ հանրագրութեան ձեւն համապատասխանէ Երեսփոխանաց Հարցմանց համար պայման ցուցուած ստորոգելեաց , կրնան զայն հաղորդել ժողովին իւր կողմէն մասնաւոր առաջարկութեան կամ հարցման մը կցելով եւ ժողովն ելք կուտայ խնդրոյն կանոնական արամադրութեանց համեմատ :

80Կ. 25. — Ստիպողութիւն կրնայ խնդրուիլ ամեն տեսակ առաջարկութեանց եւ խնդրոց համար՝ 'ի դիմաց Նախագահին յանուն Վարչութեան եւ կամ առաջարկութեան հեղինակին կողմէն՝ բայց միշտ գըրաւոր եւ պատճառաբանեալ . եւ ժողովն Ատենական գործողութեանց վախճանին նկատողութեան առնելով զայն՝ առանց վիճաբանութեան ձեռամբարձով կ'որոշէ մերժումն կամ ընդունելութիւն . առաջին պարագային՝ խնդիրը կը թողուի սովորական կանոնական շրջանի մէջ . իսկ երկրորդին՝ կը զետեղուի Խնդրոց կարգի եւ մինչեւ իսկ Օրակարգի մէջ ըստ որոշման ժողովոյն :

80Կ. 26. — Խնդրոց կարգ այն ցուցակն է ուր ժողովին վիճաբանութեան համար ընկալեալ եւ պատրաստեալ խնդիրք

կը նշանակուին առաջնութեան կարգաւ ըստ  
թուականի կամ ստիպողութեան շնորհիւ :

80Դ. 27. — Օրակարգ այն խնդրոց  
շարքն է որ միեւնոյն նստի մէջ վիճաբանու-  
թեան ենթարկուելու յատկացեալ են եւ  
ուր կը զետեղուին խնդրոց կարգին հետեւ-  
ողութեամբ կամ ստիպողութեան շնորհիւ :

80Դ. 28. — Ամեն նստի վերջն Դիւա-  
նի առաջարկութեամբ յատենի ժողովը կը  
կարգադրուի յաջորդ նստի օրն եւ Օրակար-  
գըն որ կը հաղորդուի Երեսփոխանաց հրա-  
ւիրագրոց միջոցաւ գո՛նէ վեց օր յառաջ :

80Դ. 29. — Սոյն երկու ցուցակը Ա-  
տենադպրին խնամօք մասնաւոր Տումարի  
մէջ կ'արձանագրուին եւ մէկ մէկ Օրինակն  
ժողովարարին մէջ կախուած կը մնան 'ի տես  
ամենեցուն :

#### Բ. — Վիճաբանութիւն

80Դ. 30. — Երբ Ատենական գործո-  
ղութիւնք կ'աւարտին, որոց սակայն մէկ  
ժամէ աւելի ժամանակ չ'գրաւելուն մեծ  
խնամք պէտք է տանի Դիւանը, Օրակարգի  
ձեռք կը զարնուի, եւ խնդիրները կարգաւ  
վիճաբանութեան եւ որոշման կ'ենթարկին,  
եթէ ներկայ Երեսփոխանաց թիւը ընտրեալ  
եւ պաշտօնի վրայ գտնուող Երեսփոխանաց  
թուոյն կէսէն գոնէ մէկ աւելի է, զոր Դի-  
ւանը նախագահին հետ միասին կ'ստուգէ  
ներկայութեան տումարէն ուր ժողովականք  
կ'ստորագրեն 'ի մտանելն 'ի սրահ ժողովոյ :

80Դ. 31 — Իսկ եթէ այս թիւ լցուած  
չէ, ժողովը կ'զբաղի Օրակարգի խնդրոց նա-  
խապատրաստական վիճաբանութեամբ, թող-  
լով որոշմունքը մեծագոյն մասի ներկայու-  
թեան :

807. 32. — Ո՛ր եւ է խնդրոյ վերաբերեալ վիճաբանութիւն բացուելու ժամանակ, երեսփոխանք խօսք կը խնդրեն Դիւանէն թեր կամ դէմ խօսելիքնին յայտնելով, եւ Ատենապետը խօսք կուտայ նոցա փոխասաց կարգաւ, իսկ վիճաբանութեան մէջ տեղ ամեն ժողովական աղատ է դարձեալ խօսք խնդրել եւ խօսելու մի եւ առ առաւելն երկու անգամ միեւնոյն խնդրոյ վրայ. ՚ի բաց առեալ խնդրոյն Տէրն եւ Նախաքննութեան Տեղեկարբերն՝ որ կրնան խօսք առնուլ քանի անգամ որ հարկ տեսնեն:

807. 33. — Ատենաբանք միշտ յոռնկայս կը խօսին ՚ի բեմէ կամ իրենց տեղէն՝ եթէ հակիրճ է խօսքերնին. Նախադահին միայն արտօնութիւնն է խօսիլ՝ բազմեալ յիւր Աթոռ. եւ Ատենապետը կ'արտասանէ իւր տեղէն Ատենական բարեկարգութեան եւ վիճարանական ուղղութեան վերաբերմամբ խօսելիքներն, իսկ եթէ նա եւս կամ Ատենադպիրը կամենան մասնակցիլ վիճաբանութեան, պարտաւոր են յայնժամ թողուլ իրենց Աթոռն առժամապէս իրենց Փոխանորդաց եւ միւս Ատենաբանից նման խօսք առնուլ Դիւանէն եւ խօսիլ ՚ի բեմէ:

807. 34. — Ատենաբանք պարտաւոր են իրենց խորհրդածութիւններն խնդրոյն վրայ ամփոփելով եւ բեմական վայելուչ քարբառով արտայայտել եւ ջանալ միշտ մի եզրակացութեան յանգելու: Ներելի չէ Ատենաբանից խնդրէն դուրս ո՛ր եւ է նիւթոյ վրայ տարածել վիճաբանութիւնը եւ քննաւին արգիլեալ է օրինօք ազգային գործոց պատկանեալ խնդիրներէ դուրս ուրիշ քարբեր խնդրոց վրայ խօսիլ կամ ակնարկութիւն ընել:

807. 35. — Վիճաբանութեան միջոցին՝ իբրեւ միջադէպ՝ կանոնական դիտողութեան կամ անձնական պատուոյ պաշտպանութեան համար խօսք խնդրողին կը տրուի միշտ:

բայց միանգամ եւ եթ, եւ պատասխանն առնուելով՝ նոյնպէս միանգամ՝ միջադէպը կը փակուի անմիջապէս կանոնական տնօրինութեամբ:

80Դ. 36. — Վիճաբանութիւնը կ'աւարտի երբ Խօսից կարգն սպառի: Իսկ եթէ մի եւ նոյն խնդրոյ վրայ վեց Ատենաբանք թեր ու դէմ խօսելէ յետոյ վիճաբանութիւնըն դարձեալ յերկարածգուի, Ատենապետը մնացեալ Ատենաբանից անուններն յայտնելով կը հարցունէ ժողովին կամքը՝ 'ի մասին վիճաբանութիւնը շարունակելու կամ յաջորդ նստին թողելու եւ կամ երկու ընդդիմախօս Ատենաբան եւս ունկնդրելով փակելու, եւ ըստ այնմ կը վարուի:

#### Գ. — Որոշումն

80Դ. 37. — Վիճաբանութիւնը փակուելէ յետոյ Ատենապետը կը ձեռնարկէ որոշման գործողութեան, Ատենաբաններէն առաջարկեալ եզրակացութիւններն մի առ մի եւ թեր ու դէմ կարգաւ քուէի դնելով. եւ 'ի դէպս բացակայութեան ձեւաւորեալ եզրակացութեանց, ինքն անմիջապէս կը պատրաստէ ժողովականաց խորհրդածութեանց ամփոփմամբ բանաձեւ մը եւ զայն կ'ենթարկէ ժողովոյ քուէարկութեան:

80Դ. 38. — Ո՛չ վիճաբանութեանց փակման եւ ո՛չ որոշման քուէարկութեան միջոցին կամ անմիջապէս յետոյ ո՛չ ումեք խօսք կը արուի ո՛ր եւ է ձեւով անդադառնալու համար նոյն խնդրոյ վրայ:

80Դ. 39. — Ազգային ժողովոյ մէջ որոշմունք միշտ քուէարկութեամբ կը տըրուին: Քուէարկութիւնը յայտնի է կամ գաղտնի:

Յայտնի քուէարկութիւնը կը կատարուի ձեռամբարձով կամ ել ու նիստով եւ միշտ

կրկին գործողութեամբ, առ 'ի փորձ եւ հակափորձ :

Գաղտնի քուէարկութիւնը կը կատարուի գրութեամբ քուէթղթի վրայ մի եւ եթբառի, այո՛, 'ի նշան ընդունելութեան կամ ո՛չ, 'ի նշան մերժման եւ եթէ ընտրութիւն մ'է որ տեղի կ'ունենայ, որոշեալ թուով անուանց նշանակութեամբ (միանուն կամ բազմանուն քուէ) :

80Գ. 40. — 'ի բաց առեալ Կ. Պօլսոյ եւ Երուսաղէմի Պատրիարքաց եւ Ազգային Ժողովոյ Դիւանի եւ Վարչական Ժողովոյ անդամոց եւ ամբաստանական դատերու Քննիչ Յանձնաժողովոց ընտրութիւնն եւ Սահմանադրական վերաքննութեան վճռական որոշումնք որ անհրաժեշտ կ'պահանջեն գաղտնի քուէարկութիւն, միւս բոլոր խնդիրներ եւ ընտրութիւնք կրնան որոշուիլ եւ կատարուիլ յայտնի քուէով :

Բայց եթէ հինգ Երեսփոխանաց ստորագրութեամբ գաղտնի քուէարկութիւն խնդրուի, ժողովը պարտաւոր է համակերպիլ ամեն պարագայի մէջ :

80Գ. 41. — Քուէարկութեան կատարմանէ յետոյ անմիջապէս քուէհամար կ'ըլլայ 'ի ձեռն Դիւանի եւ 'ի ներկայութեան մասնաւոր Քննչաց, զորս ժողովն կ'որոշէ կանխառ. եւ քուէարկութեան մասնակցողաց թուոյն կէսէն մէկ աւելի ձայնիւ որոշում կը տրուի խնդրոյն կամ ընտրութեանն վրձաբար, եթէ սոքա բացարձակ առաւելութիւն ձայնից կը պահանջեն սահմանադրաբար :

Իսկ այն ամեն ընթացիկ խնդիրներն եւ ընտրութիւններն որոց համար Սահմանադրութիւնն չ'է հարկադրած բացարձակ առաւելութիւն ձայնից, կ'որոշուին համեմատական առաւելութեամբ ձայնից, ինչ որ ալ ըլլայ ասոնց թիւը :

80Գ. 42. — Եթէ ո՛ր եւ է քուէարկութեան մէջ ձայնից հաւասարութիւն պա-

տանի, եթէ Պատրիարք Նախագահը ներկայ է ժողովին, անոր կարծեաց կամ քուէի կողմը կը հասկի որոշումը. իսկ եթէ ո՛չ Ատենապետին կողմը:

80Կ. 43. — Ազգային ժողովոյ որոշմունք յաւարտ իւրացանչիւր նստի՝ անմիջապէս Պատրիարքին կը մատուցուն Դիւանի կողմէ ստորագրեալ:

80Կ. 44. — Ժողովն իւր որոշմանէ չի կրնար դառնալ կամ զայն ժողովուել եթէ առ այս ստիպողաբար եւ պատճառաբանեալ առաջարկ չ'ըւայ իրեն Պատրիարքի կողմէն կամ գէթ տասն երեսփոխանաց ստորագրութեամբ, յորում պարագայի խնդիրն կրկին կ'ընդունուի ի վիճաբանութիւն, ինչպէս կարգի կամ Օրակարգի մէջ զետեղուելով ըստ որոշման ժողովոյ:

## ԳԼՈՒԽ Գ.

### ԱՐԵՎԱԴԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

80Կ. 45. — Պատրիարքին կը պատկանի Ազգային ժողովոյ ներքին եւ արտաքին ապահովութեանն հսկել պատշաճ եւ գործնական միջոցներով:

80Կ. 46. Ազգային ժողովոյ նիստերուն ունենդիրք եւ այցելութեւ եւ ՚ի մասնաւորի լըրագրական ներկայացուցիչք կ'ընդունուին մասնաւոր Մտից տմսով:

Սակայն երբ Պատրիարքը պատշաճ դատէ, կամ տասն երեսփոխանք դրաւոր խընդիր մատուցանեն առ այս հաւաքաբար, ժողովը կամ ՚ի դռնփակ նիստ կը հրաւիր-



ուի, եւ կամ դռնքացը դռնփակի կը վերածուի անմիջապէս:

80Գ. 47. — Ունկնդիրք պարտին ըզգուշանալ ժողովոյն բարեկարգութեան խանգարիչ եւ գործողութեանց խախտման արդիւնքէ, աղմկով կամ հանութեան կամ տըհանութեան ո՛ր եւ է ցոյցերով:

Այս տեսակ պակասութեան մէջ գըտնուող ունկնդիր մը՝ երբ Ատենապետի ազդարարութեան վրայ չ'հանգարտի, գուրս կը հանուի Սրահէն:

Եթէ բազումք յունկնդրաց խմբովին գործեն միեւնոյն պակասութիւնը եւ Ատենապետին եւ նաեւ Նախագահին յորդորանաց չ'անստով շարունակեն աղմուկն եւ անկարգութիւնն, անմիջապէս եւ ամբողջապէս կը պարպուի ունկնդրաց Սրահը:

80Գ. 48. — Երեսփոխանը՝ իւրաքանչիւրն Աթոռ մ'ընտրելով հանդարտութեամբ եւ իրենց կոչմանն արժանավայել ընթացքով կը վարեն իրենց պաշտօնն եւ յօժարակամ համակերպութիւն ցոյց կուտան Ատենապետին կանոնական տնօրինութեանց, որ իւր կողմէն կատարեալ անկողմնակալութեամբ զիւր պաշտօն ի գործ դնելով, ամեն ջանք կ'ընէ տեղի չ'տալու ժողովոյ ներդաշնակութեան խանգարմանն:

Ա. — ՊԱՏԺԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

Ա. — Ժողովականաց համար

80Գ. 49. — Երեսփոխանաց ինչպէս նաեւ առանց Երեսփոխան լինելու վարչական ժողովոց անդամակցութեան շնորհիւ Ազգային ժողովոյ անդամ եղողներուն համար կանոնական պատիժներն են.

Ա. Յորդոր ՚ի կանոնապահութիւն, Ատենախօսի մը՝ խնդրէն շեղած ժամանակ, Երեսփոխանի մը՝ ընդմիջում ընելու կամ աղմուկ յարուցանելու ժամանակ, եւն:

Բ. Ազգաբարձրիւն թէ 'ի կարգ պիտի նրաւիրուի, յորչորանաց չ'անսացողներուն համար :

Գ. Հրաւեր յետս կոչելոյ արտասանեալ անվայել բառ կամ խօսք մը, անվայել քաշաքականապէս թէ՛ բարոյապէս :

Դ. 'ի կարգ կոչումն, ազգաբարձրութեան կամ յետս կոչման հրաւերին չ'անսացողին համար :

Ե. Պարսաւանաց ենթարկումն, 'ի կարգ կոչման հակառակ միեւնոյն պակասութիւնը շարունակող կամ կրկնողին համար :

Զ. Արտաքսումն ի ժողովարանն պարսաւանաց ականջ չ'կախողին կամ ժողովոյ մէջ նախադահին կամ Դիւանին կամ ժողովականաց անարգական խօսք ուղղող կամ բռնական միջոցներու օգտուելիք կամ դիմում ընողներուն համար :

80Ի. 50. — Առաջին չորս տնօրինութիւնք Ատենապետին կողմէն ուղղակի կը կատարուին՝ առանց ժողովոյ կարծիքն առնելու։ Իսկ վերջին երկուքին համար Ատենապետը կ'առաջարկէ, ժողովը կ'որոշէ իւր քուէով առանց վիճարանութեան եւ նախադահը կը գործադրէ :

80Ի. 51. Միեւնոյն նստի մէջ զանազան պատճառներով երեք անգամ 'ի կարգ կոչուող Երեսփոխանն կը կորուսանէ իւր իրաւունք խօսելոյ նոյն նստի մէջ :

Պարսաւանաց ենթարկեալ Երեսփոխանըն նոյն եւ յաջորդ նստի մէջ խօսելու իրաւունքէն զրկեալ է :

Արտաքսեալ Երեսփոխանն չ'կրնար երեւալ յաջորդ նստին՝ ժողովարահին մէջ եւ երրորդին պարտաւոր է դալ, բայց զըրկեալ է խօսելու իրաւունքէ :

Բ. — Դիւանի համար

80Ի. 52. — Դիւանի անգամը եթէ առանց բանաւոր պատճառի յաճախ բացա-

կայ մնան, Նախագահին կողմէն ազդարարութիւն կ'ընդունին՝ առաջին անգամ՝ առանձինն, իսկ երկրորդին՝ յատենի ժողովոյ :

80Գ. 53. — Եթէ իրենց պատճառի կատարման մէջ ճշդութիւն եւ կատարեալ անկողմնակալութիւն ցոյց չ'տան, տասն Երեսփոխանաց գրաւոր գանգատանաց վրայ՝ Նախագահին կողմէն ՚ի կանոնապահութիւն կը հրահրուին :

80Գ. 54. — Եթէ միեւնոյն վիճակ շարունակուի եւ բողոքը կրկնուի եւ Դիւանն անադարանալի մնայ, Նախագահը կը հրահրէ զնա տալ զիւր հրատարական :

80Գ. 55. — Ո՛ր եւ է պատժական տընօրինութեան ենթարկեալ անձն իրաւունք ունի խօսք առնուլ արդարացունելու համար զանձն այն պակասութենէն որոյ համար պատժոյ ենթարկեալ է. եւ եթէ ժողովն արդարացի դատէ տրուած բացատրութիւնըն, պատժէն ազատ կը կացուցանէ զնա կամ եթէ արդէն գործադրեալ է, ՚ի Դիւանէ պարտուց հատուցում կը տրուի նմա :

80Գ. 56. — Երեսփոխանք անհատապէս կամ խմբովին իրաւունք չ'ունին միջամրտելու պատժական տնօրինութեանց ո՛ր եւ է կերպով. կրնան միայն կանոնական զիտողութեան համար խօսք առնելով մատնանիչ ընել պատժապարտ պակասութիւնը եւ երբ ՚ի Դիւանէ քուէ խնդրուի կանոնական տընօրինութեան մը համար՝ տալ իրենց քուէն ՚ի նպատ կամ ՚ի վնաս յանցապարտին. իսկ առաջարկութիւնը Դիւանին իրաւասութիւնըն է եւ գործադրութեան իրաւունքը Նախագահին :

Գ. — Բացակայութիւն



80Գ. 57. — Երեսփոխանք պարտին ան-

պատճառ ներկայ գտնուել ամեն նստի եւ ատենանի բացման որոշեալ ժամուն. կամ քէթ գրով իմաց սալ Նախագահին բանաւոր պատճառաւ բացակայ գտնուելու ստիպեալ լինելնին :

807. 58. — Եթէ Երեսփոխան մը աւանց բանաւոր պատճառ իմացունելու գրով երեք անգամ յաջորդաբար բացակայ գրտնուի ժողովէն, Դիւանի կողմէն պատճառը կը հարցուի իրեն նամակաւ : Եթէ պատասխան չ'առնուի եւ չորրորդ նստին դարձեալ բացակայ գտնուի, երկրորդ գրութեամբ իմաց կը տրուի իրեն թէ՛ « Եթէ յաջորդ նիստին եւս չ'ներկայանայ, ինքնակամ հրաժարում պիտի նկատուի իւր հինգերորդ և բացակայութիւն » : Սոյն եղանակաւ ինքնակամ հրաժարելոց անուններն կը ջնջուին Երեսփոխանաց ցուցակէն եւ եղելութիւնը կը հաղորդուի ժողովոյն եւ ընտրող Թաղին կամ Գաւառին եւ կը հրատարակուի լրագրութեամբ :

Անդամք Յանձնաժողովոյ

ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹԻՐԵԱՔԵԱՆ

Յ. ՆՈՒՐԵԱՆ

Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Յ. ԳՈՒՐԳԷՆ





